

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2019թ. սեպտեմբերի 13- ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 2-րդ Բ դասարանի ծնողական ժողովը:

Ժողովին ներկա էին 30 ծնող:

Ժողովին մասնակցում էր տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ծնողական խորհրդի ընտրության հարցը:
2. Ընթացիկ հարցեր

1.Լսեցին.- Ծնողական խորհրդի ընտրության հարցը:

Դասղեկ Հ. Սարգսյանը ծնողներին հայտնեց, որ ծնողական խորհրդի նախագահ Տաթև Ազատյանը չի կարող ստանձնել ծնողական խորհրդի նախագահի աշխատանքները: Ուստի պետք է ընտրեն նոր նախագահ: Ակտիվ քննարկումների արդյունքում ձևավորվեց նոր ծնողական խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Շահինյան Անի՝ նախագահ
2. Սեդա Եղիազարյան
3. Մարիամ Գաբրիելյան
4. Մարգարիտա Գրեյան
5. Ռոզա Խաչատրյան

Որոշեցին-Բարեխղճորեն կատարել իրենց վստահված գործը, օգնել դասվարին, համագործակցել նրա հետ՝ դարձնելով երեխաների կրթության գործընթացն ավելի արդյունավետ:



2. Լսեցին- Ընթացիկ հարցեր (նոր առարկաներ, նոր ուսուցիչներ, թեմատիկ և աշխատանքային տետրեր, դասացուցակ, ռեժիմ):

Հ. Սարգսյանը ծնողներին տեղեկացրեց, որ երկրորդ դասարանում երեխաներն ուսումնասիրելու են նոր առարկաներ՝ ռ. լեզու, շախմատ, ես և շրջակա աշխարհը: Ասաց, որ ռուսերենը պարապելու են ուսուցիչներ Վեներա Միրզոյանը և Տաթևիկ Մանթաշյանը: Շախմատը պարապելու է նոր ուսուցչուհի՝ Սեդա Անտոնյանը, իսկ ես և շրջակա աշխարհը կպարապի ինքը:

Ընկեր Սարգսյանը կարևորեց նաև պատրաստի թեմատիկ տետրեր ունենալու անհրաժեշտությունը: Նա ծնողներին ծանոթացրեց երեխաների շաբաթական ծանրաբեռնվածությանը և ռեժիմին: Նա ասաց, որ <<Տաք սնունդ>> ծրագրի իրագործումը

ընթանալու է նույն սկզբունքով (ամսական 300դրամ): Քննարկումների արդյունքում բոլոր ծնողներն էլ համաձայնություն հայտնեցին ունենալ թեմատիկ և աշխատանքային տեսրեր:

Որոշեցին. - Տեսրերի ձեռքբերման հարցով զբաղվեն ծնողական խորհրդի նախագահն ու անդամները, իսկ սննդի համար նախատեսված 300-ական դրամը՝ դատելով:

Ծնողխորհրդի նախագահ՝  / Անի Շահինյան/
Ժողովի քարտուղար՝  / Թեհմինե Անտոնյան/